

Տետեւ ինչպէս կրցար իմանալ, այս երկու մուրուքներուն ալ ուղղելէ առաջ չէք կրնար խոստովանիլ որ յամենայնի մի եւ նոյն դաւանութիւնը պարզապէս ու կատարելապէս ունենաք կաթողիկէ Առաքելական Հռովմեական Եկեղեցւոյ հետ: Արդ պէտք է որ դուն ալ մի եւ նոյն բանը հող գործագրես, զոր թախանձանօք կը խնդրենք քեզմէ ըստ պարտուց մեր հովուական պաշտաման. եւ կը բաղձանք նաեւ որ կարելի եղածին չափ փութով ծանուցանես մեզ ինչ որ ըրած ըլլաս: Իսկ մենք բնաւ չպիտի դադրինք բարեպաշտ ջանքերդ ու քու աշխատանքներդ Աստուծոյ յանձնելու, միշտ մեր աղօթից մէջ զքեզ յիշելով: Եւ մեր Առաքելական Օրհնութիւնը, ինչպէս որ մեզմէ թախանձագին խնդրեցիր, մեր սրտին ամենառատ գթութեամբն կը շնորհենք քեզ յօժարակամ:

Տուեալ ի Հոռմ, առ Եկեղեցւոյն Սրբուհւոյն Մարիամու Մատր յորջորջելոյ, ընդ մատանեաւ Չկնորսի, յԺԳ. Կաղանդից Նոյեմբերի (20 Հոկտ.) 1613, Բաճաւապետութեան Մերոյ յիններորդում ամի: